

Զ. ՍՈՒԶՅԱՆ

Հ. ԱՎԵՏՅԱՆ

# ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ

ԳԼԽԱՎՈՐ ՎՆՍՍԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. Ա. Ց. Ա. Ս. Ա. Ն Ո Ւ Մ

ՅԵՎ. ՊԱՅԻՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ ՆՐԱՆՑ ԳԵՄ

632

U-95

ԳՅՈՒՂԱՏԻՏԵՍԱԿԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1937

17811

4 AUG 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ-ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՅԱԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՅԱՆ

632  
U-35

Mr.

## Զ. Գ. ՍՈՒԶՅԱՆ Հ. Ս. ԱՎԵՏՅԱՆ

## ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ


**ԱՆԱՊԱՐ ՎԵՐԱՍՈՒՆԵՐՆ ՈՒ ՀԻՎԱՆԴՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
Հ. Յ. Յ. Ս. Ն. ՈՒ Մ**

ՅԵՎ. ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ ՆՐԱՆՑ ԴԵՄ

1010  
42420

ԳՅՈՒՂԱՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ



1937

07 AUG 2013

ԽՄԲ. ԿՈՂԵԿԻՒՄ. Գ. Ազարյան  
Գ. Թարայան  
Գ. Մարգարյան

### Յ. Գ. Սուճյան և Ա. Ս. Ավետյան

Главнейшие вредители и болезни  
плодовых садов в Армении

и меры борьбы с ними

Сельхозгиз, Ереван, 1937 г.

### ԽՄԲԱԳԲՈՒԹՅԱՆ ԿՈՂԵԿԻՒՄ

Մեր պաղատու այգիների բերքատվության բարձրացման գործում կարևոր նշանակություն ունի պայքարն այգիների այն բաղման թիվ վնասատուների և հիվանդությունների դեմ, վորոնք ամեն տարի վոչ միայն բերքի մեծ կորուստ են պատճառում, հասցնելով այն յերբեմն 60—70%՝ այլև մեծ չափով իշեցնում են ստացվող բերքի վորակը:

Այսած վնասատուների, ու հիվանդությունների հասցրած այլ խոշոր վնասին, դժբախտաբար մեղ մոտ հարկ յեղած ուշադրություն չի դարձվում մեր պաղատու այգիների բուժման աշխատանքներին: Միշտ այգիների բուժման պլանները թերակատարվում են և, վոր, ամենակարևորն են, բուժման աշխատանքները կատարվում են վասորակ. և մեծ ուշացումներով: Այս բոլորի հետեւանքը լինում է այն, վոր շատ հաճախ պայքարի աշխատանքները վոչ մի արդյունք չեն տալիս:

Պաղատու ծառերի վնասատուների և հիվանդությունների գեմ տարվող անհաջող պայքարի պատճառներից մեկն ելայն ե, վոր մեր պայքարի ոպերատիվ կազմակերպությունները և այգեգործ կոլտնտեսականները լավ ծանոթ չինելով մեղ մոտ տարածված վնասատուների և հիվանդությունների, նրանց բիոլոգիական առանձնահատկությունների և գրանցից բղխող պայքարի մեթոդների և ժամկետների հետ, չեն կարողանում կազմակերպել արդյունավետ պայքար նրանց գեմ:

Ներկա գրքույիի նպատակն ե՝ բույսերի պաշտպանության հայատանի Գիտահետազոտական կայանի կատարած ուսումնակերությունների և նորագույն գրականության տվյալների հիման վրա, տալ մեղ մոտ տարածված պաղատու ծառերի գլխավոր վնասատուների և հիվանդությունների մասին անհրաժեշտ գիտելիքների այն մինիմումը, առանց վորի յերբեք հնարավոր չե կազմակերպել գիտականորեն հիմնավորված արդյունավետ պայքար:

Գրքույիի I և III գլուխները գրել ե բույսերի պաշտպանության հայատանի Գիտահետազոտական կայանի ավագ գիտ. աշխատակից, Փիտոպությունը ընկ. Զ. Սուջյանը, իսկ II գլուխը՝ սույն կայանի ավագ գիտ. աշխատակից, հնատոմությունը ընկ. Հ. Ավետյանը:

## ՊՏԼԱՏՈՒ ԱՅՉԻՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պտղատու ծառերի հիվանդություններն առաջ են գալիս մի շարք պատճառներից, գրանցից ամենակարևորները, վորոնց վրա կանգ ենք առնելու այս գրքույկում, հանդիսանում են այն հիվանդությունները, վորոնք առաջանում են բակտերիաներից, այսպէս կոչված՝ բակտերիազները և սնկերից՝ սնկացին հիվանդությունները:

## I. ՊՏԼԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԲԱԿՏԵՐԻԱԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Բակտերիոզներ)

Պտղատու ծառերի բակտերիալ հիվանդություններ շատ կան, բայց գրանցից ամենակարևորը, վորի տարածումն այս 5—6 տարվա ընթացքում Հայաստանում մեծ չափերի հասավ, դա պտղատու ծառերի արմատների հաղցկեղ կամ ռակ հիվանդությունն է, վոր առաջանում և *Bacterium tumefaciens*-ից:


Արմատային քաղցկեղ հիվանդությունով վարակվում են վոչ միայն պտղատու ծառերը, այլև բազմաթիվ ռուբշ բույսեր, այդ թվում և խաղողը, անտառային մի շարք կուտուրաներ և այլն. գրականության մեջ մինչեւ այժմ հայտնի յեն 40-ից ավելի ընտանիքների պատկանող բույսեր, վորոնք շատ կամ քիչ չափով վարակվում են քաղցկեղով:

Քաղցկեղ հիվանդությունով ավելի հաճախ վարակվում են տընկինները, քան թե հասունացած պտղատու ծառերը, այդ պատճառով ել շատերն այս հիվանդությունը համարում են վորպես անկարանային հիվանդություն:

Քաղցկեղով վարակվում են առաջին հերթին արմատները, արմատավիզը, յերբեմն ել ճյուղերը: Բույսի վարակված մասերի վրա առաջ են գալիս ուռուցքներ, վորոնք լինում են սկզբում փոքր սիսերի, կարնույնիսկ զնդանեղի գլխի մեծության, հետագայում բոռնցքի մեծության են հասնում, յերբեմն նույնիսկ ավելին: Այս ուռուցքներն ոկզիրնական շրջանում լինում են սպիտակավուն, փափուկ, հետագա-

յում ավելի կարծրանում են և իրենց գույնով նմանում են արմատների կեղեի գույնին:

Արմատների վարակումը կարող է առաջ գալ վայրակների 40–60° սրական դասնալուց մինչև տնկարանից փոխադրելը: Քաղցկեղ հիվանդություն առաջ բերող բակտերիան բույսը վարակում է վերքերի միջոցով: Վերքերը բույսի վրա կարող են առաջ գալ զանազան պատճառներից՝ վնասատուներից, բաղնանի, նոսրացման և պատվաստի ժամանակ գործադրվող գործիքներից և այլն: Քաղցկեղը չափազանց արագ տարածվում է ջրովի հողերում, յեր վարակված հողից ջուրուանցներով չվարակված հողամասը՝ իր հետ տանում է բակտերիաներին և վարակում առողջ տնկիներու արմատները: Բացի ջրից, քաղցկեղի տարածման խնդրում մեծ գեր են կատարում և գյուղատնտեսական գործիքները, փորոնք վարակված հողամասի վրա ուղարկործելուց հետո, առանց ախտահանում կատարելու, տեղափոխում են չվարակված հողամասերը և մշակում հողը:



Նկ. 1. Արմատների քաղցկեղ

Այս հանգամանքը, փոր պըտղառու ծառերը բաղմամյա կուլտուրաներ են, արմատների վարակումը՝ քաղցկեղի ուռուցքների առաջացումը տեղի յեւնենում գոչ թե մի տարում, այլ մի քանի տարվա ընթացքում: Այս տեսակետից ելքաղցկեղ հիվանդության վնասակար ագդեգցությունն արտահայտվում է գոչ թե միանդամից, տուածին կտմ յերկորդ տարում, այլ աստիճանաբար, մի քանի տարվա ընթացքում: Այս կարեռ հանգամանքը շատերն աչքաթող են անում և բարարվելով մեկ կամ յերկու տարվա դիտություններով՝ քաղցկեղ հիվանդությունը համարում են գորպես վոչ վնասակար հիվանդություն: Այս տեսակեաը միանդամայն սխալ է:

Ինչպես տեսանք, քաղցկեղով վարակվում են ծառերի բաղմամյամասը՝ արմատները, արմատավիզը, ճյուղերը, փորոնց վրա առաջանում են զանազան մեծության ուռուցքներ: Այս ուռուցքները խանչարում են արմատների կլանողականությանը և նորմալ հյութաշարժ-

մանը բույսի մեջ, վորի հետեանքով թուլանում է ծառի աճեցողությունը, տերեները փոքրանում են, զեղուում և վատ են դիմաղրուամանավագությունը: Հաճախ քաղցկեղով վարակված տնկին հնաց վարակման առաջին տարին (գեղձենին) չորանում է:

Քաղցկեղի վնասակարության մասին խոսելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ յերկու հանգամանքը: 1) ինչ չափով և վարակվում պտղատու ծառի տվյալ տեսակը և 2) ինչ պայմաններում է վարզանում: Համաձայն բույսերի պաշտպանության կայանի չորս տարվա ընթացքում կատարած դիտողությունների, մեր պտղատու ծառերի տեսակներից ամենից ուժեղ վարակվում են գեղձենին, ապա նշենին, ապրունին, տանձենին, խնձորենին և, վերջապես, շատ թույլ չափով վարակվում է ծիրանենին: Պարզ է, փոր այս կուրտուրաներից գեղձենու նկատմամբ քաղցկեղի վնասակար ազդեցությունը պետք է ավելի մեծ լիներ: Այդպես ել է: Քաղցկեղով վարակված գեղձենու տնկիները յերբեմն հենց վարակման առաջին տարին չորանում են:

Պտղատու ծառերի քաղցկեղ հիվանդությունն առաջին անգամ Հայաստանում հայտ արերգիլ է 1931 թ.: մինչև 1936 թիվը 5-6 տարվա ընթացքում հիվանդության տարածումը մեծ չափերի յի հասել: Քաղցկեղ հիվանդության տարածման առաջին ոչախները Հայաստանում յեղել են Իջևանի նախկին սովորութեատի, «Արարատ» տրեստի Յարդ խորհանակության և Կիրովականի տնկարանները: Այս տնկարաններից առաջին յերկորսը վարակված լինելու պատճառով լիկ-վիդացիայի յեն յենթարկվել 1934 թ., իսկ կիրովականի տնկարանը վերջնականացնելու լիկ-վիդացիայի պետք է յենթարկվի 1937 թին:

Հայաստանի պտղարուծական շրջաններից քաղցկեղով շատ կամ քիչ չափով վարակված են համարվում իջևանի, նիլիջանի, կիրովականի, Հոկտեմբերյանի, Վաղարշապատի և Կոտայքի շրջանները: Քաղցկեղի հետաքա զարգացումը կանխելու և չվարակված շրջանները հիվանդություններից զերծ պահելու նպատակով Հայաստանի բոլոր տնկարանները, սկսած 1932 թվից, կարանտին հսկողության տակ են առնված:

Ինչպես զիտենք, քաղցկեղը հիմնականում տնկարանային հիվանդությունն է, նա տարածվում է զիտավորապես տնկանյութի միջոցով, այլ պատճառով և պայքարը քաղցկեղի դեմ հիմնականում պետք է տանել հենց տնկարաններում:

Վորմնք են այն ձեռնարկումները, փոր անհրաժեշտ են մեզ մոռ՝ Հայաստանում տնկարանները քաղցկեղ հիվանդությունից զերծ պահելու, տնկարանների վարակված լինելու դեպքում, հիվանդության չետագա արածումը կանխելու համար:

1. Տնկարանը կազմակերպել թիթե ավագային հողերում: Միշտ պետք է խուսափել տնկարանը հիմնել ծանր կավալին հողերում, փորոնք չափազանց նպաստում են քաղցկեղի ուժեղ զարգացմանը:

2. Գործածել առողջ, քաղցկեղից միանգամայն զերծ վայրակներ, վոչ մի գեպքում թույլ չպետք և տալ քաղցկեղով վարակված տնկարաններ:

3. Նուրացման, քաղցանի և այլ աշխատանքների ժամանակ խռովին վերքեր առաջացներեց, ինչպես և պայքարել այն վասառուների դեմ, վորոնք վերքեր են առաջացնում արմատների վրա: Չպետք և մոռանալ, վոր վերքերը, ինչպիսի պատճառներից ել առաջացած լինեն, միենույնն են, նրանք հանգիստնում են վորպիս զուռն՝ քաղցկեղ հիվանդություն առաջ բերող բակտերիաներին բույսի մեջ մանելու և վարակելու համար:

5. Վոչ մի գեպքում թույլ չպետք և տալ վարակված տնկարաններում գործազրվող գործիքները փոխազրել չվարակված տնկարանները և ոգտագործել վերջիններին հողը մշակելու համար:

Բացի այս նախագուշական ձեռնարկումներից, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի կատարել և տնկարանների հետազոտությունն պարզելու համար նրանց վարակվածությունը: Այս հետազոտությունները կատարում են Հողդողկոմատի Կարանտին Տեսչությունը: Յեթե հետազոտության ժամանակ պարզվեց, վոր տվյալ տնկարանը քաղցկեղ հիվանդությունով վարակված չել, այդ գեպքում Կարանտին Տեսչությունը տալիս են համապատասխան վկայական (սերտիֆիկատ), վորից նետ այն տնկարաններից տնկանյութ են բաց թողնվում առանց ախտահանման, առաջին հերթին՝ քաղցկեղով չվարակված շրջանների համար և ապաքըստ համարակության, ավելցուել ունենալու գեպքում արվում են վաշրակված շրջաններին: Իսկ յեթե կարանտին հետազոտության ժամանակ պարզվեց, վոր տվյալ տնկարանն ամրողովին կամ նրա վարոշ հողամասերն են վարակված քաղցկեղով, այդ գեպքում աշնանը կամ գարնանը տնկինները հանելիս նայում են արմատները, վորոշում վարակվածության տոկոսը և յեթե պարզվեց, վոր տնկինները վարտեկված են 20—30% -ով, այդ գեպքում դիմում են քաղցկեղի դեմ պայքարելու արմատական միջոցին, այն են վարակված հողամասերի կամ ամբողջ տնկարանի (յեթե տնկարանը վարակված ե ամրողովին 20—30 տոկոսով) տնկինները, ինչպես առողջները, նույնպես և վարակվածները տեղն ու տեղն այրում են և թույլ չեն տալիս այդ հողամասում նոր տնկարան ունենալ: Տնկանյութի 20% -ից պակաս վարակված լինելու գեպքում դիմում են հետեւալ միջոցառումներին, աշնանը կամ գարնանը տնկինները հանելիս նայում են արմատները, առանձնացնում են քաղցկեղով վարակված տնկինները և այրում, իսկ չվարակվածները բաց են թողնում միայն վարակված շրջանների տնկումների համար, ախտահանում կատարելուց հետո: Ախտահանումը կատարվում ե մեկ առկույտ պղնձարջասպի լուծույթով այն ժամանակ, յերբ դեռ աըն-

կիների բողբոջները քնած դրության մեջ են: Ախտահանումը կտարժում ե հետեւյալ ձևով:

Վերցնում են 3 հատ լայնաբերան կիսատակառ կամ ուղղակի տակառ, վորոնցից առաջինի մեջ ջուր են լցնում, յերկրորդի մեջ մեկ տոկոսա պղնձարջասպի լուծույթի են պատրաստում, իսկ յերրորդի մեջ՝ կավաջուր (ինչպես ջուրը, նույնպես և կավանողը յերրորդ տակառի լուծույթի համար պետք ե միանգամայն զերծ լինեն քաղցկեղի բակտերիաներից): Առաջին կիսատակառի ջրի մեջ լվանում են ախտահանման յենթարկվելիք տնկինների արմատները, նրանց այդպիսով մաքրում հողից և ապա դուրս հանում—պահում տակառի բերնին, վոր ջուրը քամվի, դրանից հետո այդ նույն տնկինների արմատները խորասուզում են յերկրորդ տակառի պղնձարջասպի լուծույթի մեջ, ուր պահում են 3—5 րոպե և ապա դուրս հանում հեղուկի միջից և անմիջապես արմատները լվանում յերրորդ տակառի կավաջրի մեջ, վորից հետո ախտահանման աշխատանքները վերջանում են: Տնկինները յերրորդ տակառի դուրս բերելուց հետո խնամքով վաթաթում են թրջված (խոնավացրած) խոտի կամ ձելոպի մեջ համարդապես փոխազրում ուր վոր հարկն ե: Ախտահանված տնկինները տեղ համարելուց հետո պետք ե, ինչքան հնարավոր ե, շուտ տնկել և վոր ամենակարևորն ե, տնկելուց անմիջապես հետո ջրել: Յեթե այս կամ այն պատճառով հնարավոր չե անմիջապես տնկել այդ գեպքում տնկինների արմատները, մինչեւ ընի վորոշ մասը (15—20 մմ) պետք ե խնամքով թաղել խոնավ հողի մեջ:

#### 11. ՊՏՂԱՑՈՒ ԾԱՌԵՐԻ ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՅԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես պատղատու ծառերի, նույնպես և գյուղատն անսական այլ կուլտուրաների (հացարույսեր, տեխնիկական կուլտուրաներ, բանջարանոցային կուլտուրաներ և այլն) հիվանդությունների մեծագույն մասն առաջանում ե պարագիտ, առվորտիան աչքին անտեսանելի փոքր սնկերից, վորոնց կարելի յե տեսնել միմիայն միկրոսկոպով (խոշորացնող վորձիք):

Մնկերի մարմինը կազմված ե չափազանց նուրբ թելիկներից, վորոնք միցելիում անունն են կրում: Այս թելիկներն իրենց զարգացման վորոշ շրջանում առաջացնում են այսպես կոչված ապօքեներ, վորոնք սնկերի տարածման խնդրում նույն դերն են կատարում, ինչ վոր սերմերը բարձր կարգի բույսերի մոտ: Մնկերի սպորները կարող են լինել 1) ամսուային, այսինքն՝ այնպիսի սպորներ, վորոնք առաջանում են միայն ամառվա ընթացքում և այդ շրջանումն են տարածում հիմային առկույտ պղնձարջասպի ապօքեներ, վորոնք առաջանում են 2) ձմեռային սպօքեներ, վորոնք առաջանում են պղնձարջասպի լուծույթով այն ժամանակ, յերբ դեռ


աշնան վերջերին, ձմեռում են և ապա մյուս տարի գարնանը ծլում և առաջ են բերում նոր գարակում: Սպորները խոնավության և ջերմության ներկայության դեպքում ծլում են (սպորից դուրս յեկած ծիլը մնում և շատ նուրբ թելիիկի ձեռվ) և այդ ծիլը տերեների հերձանցք-ներից պտուղների, ճյուղերի, բնի վրա գանգած զանազան բնական անցքերից, կամ այս կամ այն պատճառով առաջացած վերքերից ներւ են մտնում բույսի մեջ և այդպիսով առաջ բերում բույսի գարակում: Բույսի հյուսվածքների մեջ թափանցած սնկի թելիկը փորոշ ժամանակ շատ արագ աճում է, տալով բազմաթիվ ճյուղավորումներ, հետո այդ ճյուղավորումների ծայրերը կամ դուրս են գալիս տերեկի հերձանցքների միջից և ապա առաջացնում սպորներ, կամ թե ամբողջովին մնալով բույսի մեջ՝ առաջ են բերում մեծ քանակությամբ սպորներ (յերբեմն մի քանի սիլիոնի հասնող), վորոնք մնշում գործնկելով բույսի գարակված մասի արտաքին շերտի վրա՝ պատռում են այդ շերտը և այդպիսով դուրս գալիս բույսի վրա, առաջացնելով փոշու շատ բարակ շերտ, կտմ սպորների առանձին կույտեր: Պողառու ծառերի սնկային հիվանդություններն ընդհանուր առմամբ միքանի ձևով են արտահայտվում. 1) բույսի գարակված մասերի վրա (տերենների, պտղի, յերբեմն և մատաղ շվերի) առաջանում են զանազան ձեր և մեծության բազմաթիվ բծեր, վորի համար հիվանդությունը բծավորություն անունն է կրում, 2) բույսի գարակված մասերը փառում են (արմատները, ճյուղերը, պտղը), 3) ծառերի վարակված տերենների, պտղի յերբեմն և յերիտասարդ ճյուղերի վրա առաջանում են սպիտակ, գորշ-կանաչավուն կամ մոխրագույն փոշի:

Պողառու ծառերի հիվանդություններ առաջ բերող սնկերը ձմեռում են կամ բույսի գարակված մասերում՝ թելիկների և սպորների մեջ, կամ թե նենց գարակված բույսի վրա, դրսից, սպորների միջոցով: Սնկերի այս ձմեռող սպորներն ու թելիկները շատ լավ դիմապում են ձմեռվաց ցրտերին և մյուս տարի գարնանը նորից գարգանում ու առաջ են բերում նոր գարակում: Գարնան և ամառվա ընթացքում սնկերն առաջացնում են մեծ քանակությամբ ամառային սպորներ, վորոնք պատճառ են զառնում հիվանդությունների մասաւական տարածման: Առաջ թե ինչու պաղատու ծառերի սնկային հիվանդությունների դեմ պայքարը պետք է տանել ամբողջ տարվա ընթացքում՝ ուշ աշնանը և վաղ գարնանը սնկերի ձմեռող թելիկների և սպորների գեմ, վորպեսզի հիվանդությունը մի տարուց մյուս տարի չփոխազրվի, գարնան և ամառվա ընթացքում ամառային սպորների գեմ, հիվանդությունների հետագա տարածումը կանխելու համար:

**Պաղառու ծառերի սնկային հիվանդությունները բաժանում ենք յերկու մեծ խմբի. 1) կորիզավոր պտուղների և 2) հնդավոր պտուղների հիվանդությունները:**

**ա. ԿՈՐԻԶԱՎՈՐ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1. Կորիզավոր պտուղների ծակոտեն բծավորությունը.—Կորիզավոր պտուղների ծակոտեն բծավորությունն առաջանում է clasterosporium Տարօրինում սնկից, վորշ գարակում և բոլոր տեսակի կորիզավոր պտուղների—ծիրաննեռու, գեղձնեռու, սալորենու, կեռասինեռու, բակեռու և այն տերենները, պտուղները և միամյա ճյուղերը: Այս հիվանդությունը տարածված է մեր գրեթե բոլոր պտղաբուծական շրջաններում: Արարատյան գաշտում նաև շափազանց մեծ վնաս և հասցնում ծիրաննեռուն, մասսամբ և գեղձնեռուն, իսկ հյուսիսային պտղաբուծական շրջաններում մեծ վնաս և հասցնում կեռասինեռուն, բայցնուն և սալորենուն:**



**Նկ. 2. Ծիրաննեռու տերեկի ծակոտեն բծավորություն**

առաջանում են բազմաթիվ ծակոտիներ՝ զանազան մեծության և ձեր, այդ պատճառով կերպություններ ծակոտեն բծավորություն անունն է կրում: Տերենների վրա մեծ քանակությամբ բծեր առաջանարկ գեպում վերջններս գաղարում են ասիմիլացիա կատարելուց, զեղնում և ժամանակից շուտ թափվում:

**Պտուղը ծակոտեն բծավորությունով վարակվում և վարսանդի կազմակերպվելուց մինչև հասունանալը: Պտղի վրա առաջանում են**

նույնպես գորշ գույշնի բծեր, բայց վերջիններս մանր բշտիկների ձեւվով են լինում (այս ձեր բծավորությունն առանձնապես աչքի յերնկնում ծիրանի պաղի վրա): Յեթև պտղի վարակումն առաջ և գալու սկզբնական շրջանում, առաջ նաև այլեւ չի մեծանում, այլանդակվում է և թափվում, իսկ յեթև պտուղն ավելի ուշ և վարակվում, այդ գեղաքում բծերի քանակը քիչ են լինում, պտուղը շարունակում է մեծանալ, ժամանակին հասունանում է, բայց գորշ գույշնի բշտիկածեւ բծերը մնում են պտղի վրա: Պետք են ասեր, վոր մեղ մոտ նման ձեր բծավորված պտուղներ այնքան շատ են պատահում, վոր շատերը դա համարում են վոչ թե հիվանդություն, այլ վորպես պաղի բնական հատկանիշ:

Ծառերի կանաչ շվերը նույնպես վարակվում են այս հիվանդությունով, բայց բծերն այդ գեղաքում ավելի մեծ են լինում և յերկարավուն, վորոնք չորանալիս յեղբերից ձեղքվածքներ են առաջնում և այդ ձեղքվածքները գրեթե միշտ ծածկված են լինում խեժը (կոսճի) գեղնավուն կամ կարմրավուն կաթիլներով: Հիվանդության այս ձեն ամենից շատ պատահում է գեղձնում մատադ ճյուղերի վրա:

Կորիզավոր պտուղների ծակոտկեն բծավորությունը տարածված է Հայաստանի պազարուծական բոլոր շրջաններում: Այս հիվանդությունն ուժեղ տարածվում ու մեծ զանազան հասցնում, յերբ ապրիլ մայիս և հունիս ամիսները խիստ անձրեային են լինում, ինչպես գտնելի ունեցավ 1936 թվին:

Ծակոտկեն բծավորություն առաջ բերող սունկը ձմեռում և թերիկների և սպորների միջոցով վարակված շվերի և բողբոջների մեջ, վորտեղից, մյուս տարի գարնանը մանելով նոր կազմակերպված տերեների և պտղի մեջ՝ առաջացնում են նոր վարակում:

Ի՞նչպես պայքարել ծակոտկեն բծավորության գեմ:

1. Աշնանը կամ վաղ գարնանը կտրատել ծառերի վրա յեղած՝ վարակված շվերը և այրել:

2. Գարնանը բողբոջների ուռչելու ժամանակ կատարել սրսկում  $1^0/0$ -յա բորդոյան հեղուկով: այս սրսկումով վոչնչացնում ենք ճյուղերի վրա և բողբոջների թեփուկների արանքում ձմեռող սպորները:

3. Ծաղկաթափից 10—15 որ հետո կատարել 2-րդ սրսկում՝ նորից բորդոյան հեղուկով, բայց այս գեղաքում, քանի վոր տերեները շատ նուրբ են, այրվածքներից խուսափելու համար պետք են գործածել  $0,75^0/0$ -ի բորդոյան հեղուկ: Այս սրսկումով մատադ տերեները, պտուղները և ճյուղերը պաշտպանում ենք վարակվելուց:

4. Յերկրորդ սրսկումից 10—20 որ հետո, յեթև հիվանդությունը շարունակում է զարգանալ, անհրաժեշտ և կատարել իրբորդ սրսկումը  $1^0/0$ -յա բորդոյան հեղուկով:

**2. Դեղձենու և ենվելինի գանգրուտիունը.**— Դեղձենու տերեների գանգրուտիունն առաջանում է Exoascus deformans կոչված սնկից, վոր, ինչպես հիվանդության անունն և ցույց տալիս, վարակում և զլավորապես տերեները, մասամբ և կանաչ շվերի ծայրերը:

Գարնանը ծաղկաթափից հետո նոր բացված մատադ տերեները դեղնակարմբավուն դույն են ստանում: Տերերի թիթեղը հաստանում է, մեծանում, ալիքածե— գանգուր և դառնում (բայց չի վոլորգում), ինչպես գա կատարվում և լինեներով վարակվելու գեղքում), վորի համար ելգանգրուություն անունն է կրում: Այս ձեռվ վարակված տերեները մի քանի անգամ ավելի մեծ են լինում, քան նույն ծառի ասող տերեները, վառ-կարմիր գույնի: յերենին: և գեղնավուն, վորոնք հետագայում ծածկը վում են սպիտակ փոշու բարակ շերտով: Վարակված տերեները գաղարում են սնկելուց, թուրանում ու



Նկ. 3. Դեղձենու տերեների գանգրուտիուն

թափվում են ծառի վրայից: Գանգրուտիունով վարակվում են և կանաչ շվերի ծայրերը, վորոնք կնճոռտվում են, աճեցողությունը կանգ ե առնում, շիֆն այլիս չի յերկարում, իսկ նրա վրայի տերենեյին բողբոջները բացվում են, առաջ են գալիս նոր տերեներ, վորոնք նույնպես վարակված են լինում և այդպիսով ծառի վրա առաջանում են բազմաթիվ, կարմրավուն, հաստացած, ալիքածե տերեների փնչեր:

Դեղձենու տերեների գանգրուտիունը մեծ չափերի յեն հասնում խոնավ տարիներին, յերբ հատկապես ապրիլ մայիս և հունիս ամիսներին անձրեները հաճախակի յեն լինում: Նման պայմաններում հիվանդությունը շատ արագ և տարածվում, զարնան վերջերին առաջանում և մասսայական տերենաթափ, վորի հետեանքով թափվում են համար նաև նոր կազմակերպված պտուղները:

**3. Դեղձենու տերեների գանգրուտիունը պարածված և Հայաստա-**


Նի գրեթե բոլոր պտղաբուծական շրջաններում, ուր դեղձենին մշակվում է, բայց նա մեծ վնաս է հասցնում Յըլահվերդու, իշխանի, Շամշադնի, Մեղրու և Աշտարակի շրջաններում, մասսամբ և Յերևանի շրջակայքում:

Պայքարի ձեռքը.

1. Ամառվա ընթացքում կտրատել-վարակված շվերը, հավաքել ծառերի տակ թափված հիվանդ տերեները և այրել:

2. Գարնան բողբջները բացվելուց առաջ կատարել սրսկում  $10/0$ -յա բորդոյան հեղուկով կամ  $10/0$ -յա պղնձարջասպի լուծույթով: Մաղկաթափից անմիջապես հետո կատարել մի սրսկում և բորդոյան հեղուկով: Ալրվածքներից խուսափելու համար, քանի վոր այս շրջանում տերեները չափազանց նուրբ են, անհրաժեշտ է գործածել  $0,75/0$ -յա լուծույթ: Յեթե յերկարդ սրսկումից հետո հիվանդությունը շարունակվի՝ ուժեղ զարգանալ, անհրաժեշտ է  $10-15$  որ հետո կատարել յերրորդ սրսկում  $10/0$ -յա բորդոյան հեղուկով:

3. Սարտենու պալած: — Սալորենու պալաշն առաջ է գալիս Եօաս-ս թուու սնկից, վորը վարակում և սալորենու ծաղիկը: Վարակված ծաղիկի վարսանդի պատերն ուռչում, հաստանում են, վորի հետեան-



Նկ. 4. Սալորի պալաչ

քով ծաղկաթափից մի քանի որ հետո առաջ են գալիս յերկար պարկի ձեր կանաչ-դեղնավուն պտուղներ, վորոնք մի քանի անգամ ավելի մեծ են լինում առողջ պաղից և կորիք չեն պարունակում: Վարակված պտուղն սկզբնական շրջանում լինում է մսալի, հաստ պատերով, հյութալի, իսկ հետագայում պտուղը ցամաքում է, փայտանում, գորշ

դույն և ստանում և այդ ձեռվ յերկար ժամանակ մնում և ծառի վրա կամ թափվում: Վարակված պտուղը միանդամայն անպետք է դառնում գործածության համար: Պալաշ հիվանդությունն ուժեղ տարածվում և մեծ վնաս է հասցնում այն ժամանակ, յերբ ստորենու ծաղկման շրջանում լինում են անձրեային և ցուրտ յեղանակներ:

Պալաշ հիվանդություն առաջ բերող սնկի թելիկները մասամբ վարակում են և մատադ շվերը, վորոնց մեջ ձմեռում են և առաջուս տարի գարնան ծաղկակոթունի միջով անցնելով ծաղկի վարաժանգի մեջ՝ առաջ են բերում վերջնիս վարակում:

Ի՞նչպես պայքարի պարագան հիվանդության գեմ:

1. Գարնան և ամառվա ընթացքում կտրատել վարակված շվերը, ծառի վրա մնացած և տակը թափված պտուղները խնամքով հավաքել և այրել:

2. Գարնանը մինչև բողբջների բացվելը ծառերը սրսկել  $10/0$ -յա բորդոյան հեղուկով կամ  $10/0$ -յա պղնձարջասպով: Խորհուրդ և արվում այս թույների փոխարեն նույն ժամկետին սրսկումը կատարել  $5/0$ -յա յերկաթարջասպի լուծույթով:

3. Սալորենու տեխնիկա: — Սալորենու տերեների կարմրախոցն առաջանում է Polystigma rubrum կոչված սնկից: Կարմրախոցը, ինչպես հիվանդության անունն և ցույց տալիս, վարակվում են միայն տերեները: Ամառվա սկզբներին սալորենու տերեների վրա առաջանում են կանաչ-դեղնավուն, հազիվ նկատելի, կլոր ձեր, վորոնք հետագայում ավելի մեծանում, հաստանում, վառ կարմիր գույն են ստանում (խոցերի ձևով) և շատ լավ նկատվում են ինչպես տերենի տակի, նույնպես և վերկի կողմից:

Կարմրախոցն ուժեղ զարգանում և մեծ վնաս է հասցնում այն տարիները, յերբ մայիս և հունիս ամիսների ընթացքում անձրեները հաճախակի յեն կրկնվում: Նման զելքերում տերեներն ամբողջովին ծածկվում են կարմիր բծերով, գաղարում են ասիմիլացիս կատարելուց և ժամանակից շուտ թափվում են, սրա հետևանքը լինում է այն, վոր պտուղը լավ չի հասունանաւ, և ծառը թուլանում է:

Սալորենու կարմրախոց հիվանդություն առաջ բերող սունկը ձմեռում է վարակված տերեների մեջ, վորտեղ առաջ և բերում ձմեռույթին սպորներ: Գարնանը տերեների փոխելու հետեանքով դուրս են զալիս տերեների հյուսվածքների մեջ ձմեռող սպորներ, վորոնք քամու միջոցով տեղափոխվելով նոր բացված առողջ տերեների վրա՝ առաջ են բերում վերջիններին վարակում:

Սալորենու կարմրախոց՝ տարածված և Հայաստանի գրեթե բոլոր պտղաբուծական շրջաններում: Այս հիվանդությունը մեծ չափերի

յե հասնում Մեղրու, Իջևանի, Ալլահվերդու, Շամշագնի և Աշտաբակից քը շանճերում, մնացած շրջաններում ավելի քիչ են պատահում:


Կարմրախոց հիվանդության դեմ պայքարում են հետեյալ ձեռվ.

1. Աշնանը հավաքել ծառերի տակ թափված տերենները և այլեր: Այս աշխատանքը գարնանը չի կարելի հետաձգել քանի վոր ձմեռվա ընթացքում տերենների վորոշ մասը փշրվում է, հետեապես, սպորները թափվում են հողի մեջ և նրանց այլիս չի կարելի վոչնչացնել տերենները հավաքելով: Խորհուրդ և տրվում վարակված տերենները վոչնչացնել և խոր վարի միջոցով, վորը նպատակահարմար և կատարել նույնպես աշնան վերջերին:

2. Գարնանը ծաղկաթափից 5—10 որ հետո կատարել առաջին սրբակումը՝  $0,75^{\circ}/_0$ -յա բորդոյան հեղուկով: Այս սրբակումից 15—20 որ հետո կատարել յիրկըսորդ սրբակումը, դարձյալ բորդոյան հեղուկով, բայց այս սրբման համար պետք է զործածել  $1^{\circ}/_0$ -յա բորդոյան հեղուկը:

3. Կորիզավոր պտուղների մօխտագույն փառակումը.—Կորիզավոր պտուղների մոխտագույն փառակումն առաջ և գալիս *Monilia cinerea* մնկից: Մոխտագույն փառակումով վարակվում են սալորենու, կեռասենու, բալենու, ծիրանենու, դեղձենու և այլ պտուղներն ու շվերը: Հիվանդությունը պտղի վրա արտահայտվում է հետեյալ ձեռվ՝ ամառվաս սկզբին պտղի վորոշ մասը շագանակագույն և գառնում, փափկում և սկսում է փակել կարճ ժամանակաընթացքում ամբողջ պտուղն և շագանակագույն դառնութու փառակում: Փառած պտղի վրա զրսից առաջ են զալիս բազմաթիվ մոխտագույն, ցրված մանր բարձիկների Փառած պտուղը կամ ցած և ընկնում ծառից, կամ թե չմշկվում է, չորանում և այդ ձեռվ յիրկար ժամանակ կախված մնում ծառից:

Գարնանը ծաղկաթափից հետո, յերբ պտուղը նոր և միայն կազմակերպվել, վարակվում են և շվերի ծայրերը վորտեղից հիվանդությունն անցնում է տերեններին և պտուղներին: Վերջիններս շատ շուտ, նույնիսկ մեկ որվա ընթացքում գորշանում են, հետագայում չորանութ և այդ ձեռվ կախված մնում ճյուղերի ծայրերից: Հիվանդության




Նկ. 5. Սալորենու տերելի կարմրախոց

այս ձեռվ մեզ մոտ հաճախ պատահում է կեռասենու, բալենու, յիրկըս և սալորենու վրա (Դիլիջան, Կիրովական, Իջևան): Մոխտագույն փոռում առաջ բերող սունկը ձմեռում է վարակված շվերի և պտուղների մեջ: Կորիզավոր պտուղների մոխտագույն փառակումը, բայց իրարացյան դաշտավայրից, տարածված և մնացած բոլոր պտղաբուժական մջաններում:

Պայքարի միջոցները.

1. Աշնանը կամ գարնանը, մինչև բողբոջների բացվելը, ինամբ քով կարտաել ծառի վրայի վարակված ձյուղերը և այրել:



10/480

Նկ. 6. Կորիզավոր պտուղների մոխտագույն փառակում

2. Ամառվա և աշնան ընթացքում հավաքել ծառերի տակ թափւ վածք՝ վարակված պտուղները, պոկել ճյուղերի վրա մնացած հիվանդ, չորացած պտուղները, այլուց զուրս հանել և այրել, կամ թաղել հողի տակ:

3. Աշնան տերեններաթափից հետո, կամ գարնանը, մինչև բողբոջների բացվելը, սրբկել  $5^{\circ}/_0$ -յա յիրկաթարջասովի կամ  $1^{\circ}/_0$ -յա պղնձարձոսի բուժույթի:

4. Ամառվա ընթացքում, մինչև պտղի լրիվ հասունանալը յիրկըս անգամ սրբկել  $1^{\circ}/_0$ -յա բորդոյան հեղուկով, վորին պետք է խառնել և փարիզյան կանաչ ( $100$  լիտր հեղուկին  $60$ — $80$  գր), վորով հնարավոր կլինի միաժամանակ պայքարել և այն վիաստուների զիմ, վորոնք վերքեր են առաջացնում պտղի վրա և դրանով նպաստում են հիվանդության տարածմանը.



Պաղատա այզիների վիաստուները—2

6. Դեղձենու ալրացողը.—Դեղձենու ալրացող հիվանդությունն առաջանում է Sphaerotheca pannosa սնկից: Ալրացողով վարակվում են գեղձենու տերեները, ճյուղերը և պտուղները: Հիվանդությունն ակալում է գարնան վերջերից և շարունակում է զարգանալ մինչև առ աշբւն: Հիվանդ տերեների վրա ոկղընական շրջանում առաջ են գարնանական բծեր, վորոնք մի քանի որից հետո ինչպես տակի, նույնպես և վերեկ կողմից ծածկվում են սպիտակ փոշու, թաղթանման բարակ շերտով: Դեղձենու վարակված շվերը նույնակա



Նկ. 7. Դեղձենու ալրացողը

ծածկվում են թաղթանման սպիտակ գույնի շերտով: Հիվանդ շվերը դադարում են աճելուց, չեն փայտանում և հետագայում հեշտությամբ ցրտահարվում են: Ինչպես տերեների, նույնպես և շվերի վրա առաջ լացած սպիտակ գույնի շերտը հետագայում գորշ գեղնակուն է դառնում:

Ալրացողի, ինչպես ասացինք, վարակվում են պտուղները մինչև հասունացումը: Վարակված պտղի վրա առաջ են գարնանական մեծության բծեր՝ լաքաների ձևով, վերջիններս նույնպես ծածկված են լինում սպիտակ փոշու շերտով: Այս բծերը հաճախ միանում են իրար հետ և պատռմ են պտղի կեսը, յերբեմն և ամբողջ պտուղը

ալրակված մասում պտուղը չի հասունանում, պնդանում եւ Յեթե պտուղն ամբողջովին է վարակվել ալրացողով, նա այլև չի մեծանում, չմշկում է, չորանում և թափում:

Դեղձենու ալրացող հիվանդությունն առաջ բերող սունկը ձմեռում է վարակված ճյուղերի, տերեների և պտուղների վրա՝ ձմեռային սպրաների ձևով:

Դեղձենու ալրացող հիվանդությունը շատ կամ քիչ չափով տառածված է Հայաստանի բոլոր շրջաններում, բայց նրա հասցրած փասը մեծ է Մեղրու, մասամբ Ալլահվերդու, իջևանի և Աշտարակի շրջաններում, թույլ չափով նկատվում է և Արարատյան գաշտավայրում: Ալրացողի վնասն առանձնապես մեծ է տնկարաններում:

Ի՞նչպես պայքարել գեղձենու ալրացող հիվանդության դեմ:

1. Աշնանը խնամքով կտրատել վարակված ճյուղերը, հավաքել ծառերի վրա մնացած, ինչպես և տակը թափված վարակված պտուղները և այրել:

2. Ուշ աշնանը՝ տերեաթափից հետո, կամ գարնանը՝ մինչև բողոքների բացվելը սրսկել 3-5% կալցիում պոլիսուլֆիդի լուծույթ:

3. Հիվանդության նշանները յերևարեն պես կատարել յերկրորդ սրսկում՝ կալցիում պոլիսուլֆիդի 0,3% լուծույթով:

### Բ. ՀԵՂԱՎՈՐ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Պտուղների փուլը.—Պտուղների փուլն առաջանում է Mytilia fructigena սնկից, վորը վարակում է բոլոր տեսակի նորագոր պտուղները (խնձորը, տանձը, սերկեվիլը) մասամբ և կորիզավոր պտուղները: Հիվանդությունն առաջանում է ինչպես չհասունացած յերիտասարդ, նույնպես և հասունացած պտուղների վրա: Հիվանդությունն արտահայտվում է հետեւալ ձևով:

Ամառվա ընթացքում, յերբ պտուղը բավականին մեծացել է, նրա վորոշ մասը շագանակագույն է գառնում, փափկում և սկսում է փափել: Կարճ ժամանակամիջոցում ամբողջ պտուղն և այդ ձևով փուլը Փուլ պտղի վրա դրսից առաջանում են կոնցենտրիկ ձևով զասափրոված սպիտակագույն կամ մոխրա-դեղնավուն բարձիկներ, վորոնք փուլը առաջ բերող սնկի սպորների կույտերն են: Ամառվա և աշնան ընթացքում այս սպորները քամու, միջատների և թուշուների միջոցով հեշտությամբ տեղափոխվում են ասողջ պտուղների վրա և յեթե ասողջ պտղի այն մասում, վորտեղ ընկել են փառմ առաջ բերող սնկի սպորները, կան վերքեր (միջատների, կարկտի և այլ պատճառներից առաջացած), սպորներն այդ վերքերից ներս են մտնում պտղի մեջ և առաջացնում վարակումը: Այս ձևով վարակված պտուղը մի քանի որից հետո վերե նկարագրված ձևով շագանակագույն կամ ակառում և փափել: Փուլ պտուղները կամ անմիջապես ցած են

ընկնում ծառից, կամ թե չորանանում կուչ են գալիս և այդ ձևով նույնին մինչև յերկու տարի կախված մնում ճյուղերից: Պտուղների փառմը կարող է շարունակվել և բերքահավաքից հետո պահեատներում: Ընդհանրապես պետք է ասել, վոր այս հիվանդությունը, ինչպես այդում ծառերի վրա, նույնպես և պահեատներում չափազանց արագ և զարգանում և մեծ վնաս է հասցնում:


Փտում առաջ բերող սունկը ձմեռում և ինչպես ծառերի տակ թափած, նույնպես և ճյուղերի վրա մնացած հիվանդ պտուղների միջոցով՝ վորոնք հաջորդ տարվա համար վարակի աղբյուր են հանդիսանում:

Պտուղների փառմը, բացի Արարատյան գաշտից, տարածված և մնացած բոլոր պտղաբուծական շրջաններում: Այս հիվանդության պատճառած վնասն առանձնապես աշքի յե լնկնում Դիլիջանի, Կիրովականի, Ալլավերդու, Խջեսնի, Շամշադինի և Կոտայքի շրջաններում:

#### Պայքարի ձերը.

Քանի վոր պտուղների փառմը տարածվում է միայն հիվանդ պտուղների միջոցով, պարզ է, վոր հիվանդության դեմ պայքարելու հիմնական միջոցը պետք է լինի վարակված պտուղների վոչնչացումը: Ամառվա ընթացքում մինչև բերքահավաքը սիստեմատիկ ձևով պետք է պոկել ծառերի վրա յիղած՝ փառած պտուղները, հավաքել նույնպես և ծառերի տակ թափվածները, անմիջապես գուրս բերել այգուց, փոռ փորել և մեջը թաղել: Զպնտք է մոռանար, վար հիվանդ պտուղների վրա յեղած սպորները չափազանց թեթև են, նրանք քամու միջոցով նորից կարող են փոխադրվել առողջ պտուղների վրա, այդ պատճառով ել հավաքած փառած պտուղներն անմիջապես պետք է վոչնչացնել: Աշնանը բերքահավաքից հետո վերջնականապես պետք է պոկել ծառերի վրա մնացած փառած պտուղները, ինչպես և ծառերի տակ թափվածները, և այրել: Բացի փառած պտուղների վոչնչացումից, այս հիվանդության դեմ պայքարում են և սրսկումներ կատարելով:

Առաջին սրսկումը պետք է կատարել գարնանը, մինչև բողբոջների բացվելը 5°/0-յա յերկաթարջասպի լուծույթով: Ամառվա ընթացքում, մինչև պտղի հասունանալը, կատարել յերկու սրսկում ևս 10°/0-յա բորբոյան հեղուկով: առաջինն այն ժամանակ, յերբ պտուղն ընկույզի մեծության հասել իսկ յերրորդը՝ առաջինից 15—20 որ հետո: Կարկտահարության դեպքում, կարկտից անմիջապես հետո մի անգամ՝



Նկ. 8. Խնձորի փառմը

և պետք է կրկնել բորդոյան հեղուկի սրսկումը: Ամառվա ընթացքում սրսկում կատարելիս միշտ խորհուրդ է տրվում բորդոյան հեղուկին խառնել փարփղյան կանաչ (100 լիտր բորդոյան հեղուկին 60—80 գր), վորով հնարավոր կրկնի միաժամանակ պայքարել վնասառուներից պտղակերի և տանձենու գլխափղիկի դեմ, վորոնք վերքեր են առաջացնում պաղի վրա և դրանով իսկ արագացնում հիվարդության տարածումը:

3. Խնձորենու բուր.—Խնձորենու քոսն առաջանում է *Fusicladium dendriticum* սնկից, իսկ տանձենու քոսը՝ *Fusicladium pirinum*-ից: Այս յերկու հիվանդություններն իրենց արտաքին նշաններով իրար շատ նման են, տարբերությունը միայն նրանումն է, վոր խնձորենու դեպքում քոսով վարակվում են տերենները և պտղը, իսկ տանձենու քոսի դեպքում, բացի տերեններից և պտղից, վարակվում են նաև միամյա ճյուղերը:


Գարնան վերջերին խնձորենու և տանձենու տերենների վրա առաջ են գալիս գորշավուն ձիթապաղի գույնի թաշվանման ըծեր, վորոնք սկզբում փոքր են լինում, քիչ քանակությամբ և ցրված: Ամառվա ընթացքում բծերի քանակը շատանում է, վերջիններս ավելի մեծ են լինում, ձուլվում են իրար հետ և այդպիսով տերերի թիթեղի մեծ մասը, յերբեմն և ամրող տերել ծածկում: Նման ձեկի բծեր առաջ են գալիս և տերեակոթունի վրա: Տերենների ուժեղ վարակման հետևանքով հաճախ ամառվա ընթացքում տեղի յի ունենում տերեն վաթափ:

Պտուղը քոսով վարակվում է ծաղկաթափից սկսած մինչև հասունացումը: Պտղի վրա տառաջ են գալիս նույն ձեկ բծեր, ինչ վոր տերենների մոտ եր առաջանում: Վարակված մասում պտուղը դադարում է աճելուց, պնդանում է և և ճեղքածքներ առաջացնում: Յեթև պտուղը քոսով վարակվում է փոքր ժամանակ և բծերի քանակը պլոտ դի վրա շատ և լինում, նման ձեռվ վարակված պտուղը դադարում է աճելուց, այլանդակվում է, այսիս չի հասունանում, իսկ յեթե պտղի վարակումը ավելի ուշ է կատարվում, այն ժամանակ յերբ պտուղն իր նորմալ մեծության հասել ե, այդ դեպքում բծերը լինում են թվով քիչ, մակերեսային, ճեղքածքներ չեն առաջացնում, և պտուղը հասունանում է: Պարզ ե, վոր տառաջին դեպքում քոսի հասցրած վնասն ավելի մեծ և քան յերկրորդ դեպքում:

Քոսավ, ինչպես առաջինը, վարակվում են տանձենու միամյա ճյուղերը հիվանդ ճյուղերն ավելի հաստացած են լինում, կեղել կենը ուսուվում ե, տալիս և իրար ուղղահայց ճեղքածքներ, վորի հետեւ վանքով կեղեատում և առաջ գալիս Այս ճեղքածքներից ներս են

Թանում հաճախ ուրիշ տեսակի սնկեր և առաջ են բերում վայտանյուռքի հիվանդություն:

Քոսով վարակված տերեների, պտղի և ճյուղերի վրա առաջ են դալիս ամառային սպորներ, զորոնց միջոցով հիվանդությունը տարածվում և ամառվա ընթացքում: Աշնան վերջերին վարակված տերեների մեջ սկսում են կազմակերպվել ձմեռող սպորները, վորոնք ձմեռն



Նկ. 9. Խնձորի և սանձի քռություն

անց են կայնում թափված տերեների մեջ, գարնանը դուրս են դալիս տերեներից և առաջացնում են նոր վարակում:

Խնձորենու և տանձենու քոս հիվանդությունը տարածված է Հայաստանի պտղաբուծական բոլոր շրջաններում: Այս հիվանդությունը բնրքի մեծ կօրուստ և պատճառում կիրովականի, Դիլիջանի, Աղվանիկուրդու, Իջևանի և Շամշադնի շրջաններում: Արարատյան դաշտում քոսը շատ թույլ չափով զարգանում է իրստ անձրեստ տարիներին միայն:


Ինչպես պայքարել քոս հիվանդության դեմ:

Քանի վոր քոս հիվանդություն առաջացնող սունկը ձմեռում և վարակված տերեների մեջ, վորանելից մյուս տարի գարնանն անցնում և նոր դուրս լեկած տերեներին և առաջացնում և նոր վարակում անհրաժեշտ և աշնան տերեսաթափից հետո հավաքել վարակված տերեները և այբու, իսկ տանձենու դեպքում, բացի տերեների հավաքելուց անհրաժեշտ և մաքուր կտրատել և ձառերի վրա յեղած՝ վարակված չյուղերն ու այբու թույլ դեմ պայքարելու այս ձեռնարկումը չափանց կարելոր և հատկապես այն շրջանների համար, վորանել այդ հիվանդությունը մեծ վասներ և պատճառում:

Բացի տերեների վոչնչացումից, անհրաժեշտ և միաժամանակ կատարել ե ծառերի սրսկում 10%-յա բորդոյան հեղուկով, 2-3 անգամ:

Առաջին սրսկումը կատարել դարնանը՝ բողոքների ուղիղությունը ժամանակ, մինչև ծաղկելը, յերկրորդը՝ ծաղկաթափից մի քանի որ հետո, յերրորդը՝ յերկրորդից 15-20 որ հետո, յերբ պտուղներն ընկույզի մեջության են հասնում:

3. Խնձորենու լիզ տանձենու ժանգը.—Խնձորենու ժանգն առաջ է դալիս Gymnosporangium malo-tremelloides սնկից, իսկ տանձենու ժանգը՝ Gymnosporangium sabinae: Այս յերկու հիվանդությունները,



Նկ. 10. Ժանգը խնձորենու տերենի վրա և գինու ճյուղի վրա

չնայած առաջանում են տարրեր սնկերից, բայց հիվանդության նշան ներն իրար շատ նման են: Գարնան վերջերին տերեների վրա առաջ են դալիս զեղնավուն բծեր, վորոնց վրա տերենի վերերի կողմից լինում են մուգ-կարմիր գույնի մասն կետեր, իսկ հետագայում տերեների ցածր կողմից զեղնավուն բծերի վրա առաջ են զալիս փնջածն կարծ թելիկներ (խնձորենու տերեների վրա) և զեղնավուն բշտիկածն հա-

վիլվածներ (տանձենու տերեների վրա): Նման ձեր բծեր առաջ են զալիս և տերեակոթունի վրա: Ամառվա ընթացքում բծերի քանակը տերեների վրա մեծանում է, տերեւ գալգարում է նորմալ սնվելուց դեղնում և թափում է: Ժանդով վարակվում է յերեմն և պտուլը (խնձոր), վորի վրա առաջանում էն գորշ գույշի բավականին մեծ կլոր բծեր, վորոնք նույնպես կրում են իրենց վրա կարճ թելիկներ: Բացի տերեներից և պտղից, ժանդով վարակվում են և միամյա ճյուղերը (ավելի հաճախ՝ խնձորենունը): Մատաղ ճյուղերի վրա վարակված տեղում առաջ են զալիս վերքեր, վորոնք հետզետե մեծանում են, խորանում բաց քաղցկեղի տեսք են ստանում: Վերքերի առաջացման հետեանքով վարակված ճյուղերը հեշտությամբ քամուց կոտրվում են կամ հենց ծասի վրա չորանում:

Խնձորենու և տանձենու ժանդ հիվանդություն առաջացնող սունկը տարբերվում է պտղատու ծառերի մյուս հիվանդություններ առաջացնող սնկերից նրանով, վոր յերկտուն է. Նա ավըրում է յերկու տեսակ բույսի վրա—գարնան վերջերից մինչեւ ուշ աշուն՝ խնձորենու և տանձենու վրա, իսկ մնացած ժամանակ՝ մեր անտառներում տարածված գիճի (մածմե վելնիկ) կոչված բույսի վրա: Այս յերկրորդ հյուրընկալի վրայից վաղ գարնան անցնում է առաջին հյուրընկալի (խնձորի և տանձի վրա):

Խնձորենու և տանձենու ժանդ հիվանդությունն ուժեղ չափով տարածված է և մեծ վնաս և հասցնում իջևանի, Մեղրու և մասամբ Ալլահերդու ըրջաններում, ուրիշ խոսքով առաջ այն ըրջաններում, ուր միտժամանակ մոտակա անտառներում տարածված են գիճու թփեր և ծառեր:

Ի՞նչպես պայքարել ժանդ հիվանդության դեմ.

1. Հստ հսարավորության վոչնչացնել (15—20 կիլոմետր շառավիղի վրա) պտղատու այգիներից ժանդի յերկրորդ հյուրընկալը (գիճու թփերը և ծառերը), առանց վորի ժանդը չի կարող ձմեռել, հետեապիս և մյուս տարի նոր վարակում չի առաջանա:

2. Կատարել 2 անգամ սրսկում  $1\frac{1}{2}$ -յա բորդոյան հեղուկի կամ  $0,5\frac{1}{2}$ -յա սոլիսուլֆիդի լուծույթով, առաջինը ծաղկաթափից անմիջապիս հետո, յերկրորդն առաջինից 15—20 որ հետո:

3. Տանձենու երեվերեի սպիտակ բծավորություն:—Տանձենու տերեների սպիտակ բծավորությունն առաջանում է Septoria pircicola սնկից: Ամառվա սկզբին տանձենու տերեների վրա առաջ են զալիս սպիտակ գույշի մանր բծեր՝ մուգ-գորշ գույշի յերիգով: Ամառվա ընթացքում բծերի քանակը տերեների վրա խիստ շատանում է, նրանց վրա առաջ են զալիս բազմաթիվ մանր՝ սև գույշի կետեր, վորոնք հրաժանդություն առաջ բերող սնկի ամառային սպորներն են: Այս սպոր-

ների միջոցով ամառվա ընթացքում տարածվում է հիվանդությունը: Քացի ամառային սպորներից, աշնանը վարակված տերեների մեջ առաջանում են և ձմեռող սպորներ, վորոնք ձմեռն անց են կացնում թափուկած տերեների մեջ և մյուս տարի գարնանը դուրս գալով, քամու միջոցով անդապի խոխում են տանձենու առողջ տերեների վրա և առաջացնում են նոր վարակում:


Տանձենու սպիտակ բծավորությունը տարածված է մեր՝ հյուսիսային պտղաբուծական բոլոր շրջաններում: Այս շրջաններից՝ Ալյահերդու, կիրովականի, իջևանի Շամշադինի շրջաններում հիվանդությունը խիստ ուժեղ է տարածված, վորի հետևանքով հաճախ կոտրվում է յերկու տեսակ բույսի վերջերին առաջ և զալիս տերեաթափ:

Պայքարի ձևերը:

Բանի վոր սպիտակ բծավորություն հիվանդությունը զարգանում է միայն տերեների վրա և ձմեռում է վարակված տերեների մեջ, այդ տեսակեաից ել անհրաժեշտ և աշնանը տերեաթափից հետո հավաքել և այրել վարակված տերեները:

Ամառվա ընթացքում կատարել 1—2 սրսկում  $1\frac{1}{2}$ -յա բորդոյան հեղուկով, առաջին սրսկումը կատարել մայիսի վերջերին, յերկրորդը՝ առաջինից 15—20 որ հետո: Յերկրորդ սրսկումը կատարվում է միայն այն գեպքում, յերբ հիվանդությունն առաջին սրսկումից հետո շարունակում է ուժեղ գար-

նկ. 11. Տանձենու տերեի սպիտակ բծավորություն



## ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Պտղատու այգիների վնասատուները տարբեր վնասվածքներ են առաջացնում ծառերի վրա: Դա կախված է միջատների կերակրվելու տարրեր ձևից, վորը կապված է նրանց բերնի կազմության հետ: Բղեղները և նրանց թրթուրները, թիթեռների թրթուրներն ունեն այսպիս կոչված «կրծող» բերան: Նրանք կերակրվում են ծառի զանազան մասերը—կեղեր, տերենները, ծաղկի մասերը, պտուղները կրծելով:


Միջատների մյուս խումբը, վորին՝ պատկանում են լիֆճները, ունեն ծծող բերան: Նրանք խրում են իրենց կնճիթը բույսերի հյուսվածքների մեջ և ծծում են բույսի հյութը:

Ավիճներ.—Պտղատու ծառերի տերենների աակի կրղմից, մատադրիների, բնի և հաստ ճյուղերի վրա խմբերով նստած են լինում փոքրիկ, թերավոր և անթե միջատներ, վորոնք ծծում են տերենների կամքնի հույթը: Այդ փոքրիկ միջատները կոչվում են լիֆճներ: Նրանք ծծելով մեծ վնաս են պատճառում ծառին—տերենները կուչ են զալիս, այլանդակվում, թափվում են, իսկ բնի ծծելուց ամրաղ ծառը թույանում և և ավելի հեշտությամբ վարակվում ուրիշ վնասատուներով և հիվանդություններով:

Լիֆճները զարգանում են շատ արագ: Ամառվա ընթացքում նըրանք զարգանում են կենդանածնությամբ, այսինքն՝ եղը վոչ թե ձու յե զնում, այլ կենդանի միջատ և ծնում: Դա, ինարկե, ավելի արագացնում է նրանց զարգացումը: Մի տարվա ընթացքում լիֆճները կարող են ունենալ մինչև 17—18 սերունդ: Աշնան վերջներին լիվճներն արդեն ձու յեն ածում ծառերի ճյուղերի, կամ բնի վրա և այդ ձվերն են ձմեռում:

Խնձօրենու լիֆճ Արփիս մալի Degener).—Խնձօրենու լիֆճը բաց կանաչավուն գույնի յե: Վնասում է խնձօրենուն, տանձենուն, սերկելենուն: Ապրում են տերենների աակի կողմից և մատադրիների վրա:

Խնձօրենու լիֆճի ծծելուց տերենները կուչ են զալիս, իսկ մատադրիներն այլևս չեն զարգանում: Զմեռող ձվերը խնձօրենու լիֆճը ածում և բողբոջների մոտ՝ ջանել ճյուղերի վրա:



Նկ. 12. Խնձօրենու լիֆճ

Սալորենու լիֆճ (Hyalopterus pruni Fabr).—Սալորենու լիֆճը կանաչ գույնի յե, բայց վրայից բարակ սպիտակավուն փոշով և ծծելով: Վնասում է սալորի, ծիրանի, գեղձի, նշի տերենները ծծելուց: Պալրում է շատ մեծ խմբերով՝ տերենների տակի կողմից, և նրա ծծելուց տերենները թառամում են: Զարգանում են ամբողջ ամառվա ընթացքում: Զմեռող ձվերը զնում են բարակ ճյուղերի վրա: Նրանք մուգ-կանաչ գույնի յեն:

Ավելինենու լիֆճ (Myzodes persicae Sulz).—Այս լիֆճը նույնպես կանաչ գույնի յե, բայց շատ փայլուն: Վնասում է գլխավորապես գեղձենու, ծիրանենուն, սալորենուն և մի շաբթուրիշ բույսերը: Սրա ծծելուց տերենները գանգրառվում են և հետագայում թափվում: Ամառվա սկզբներին տեղափոխվում են ծխախոտի, կարտոֆիլի և այլ բույսերի վրա: Աշնանը վերադառնում են հիմնական բույսի՝ գեղձենու վրա, և այնտեղ ձու յեն ածում: Սկզբում ձվերը կանանչ են, հետո սեանում են շատ փայլուն:

Գեղձենու մեծ լիֆճ (Pterochloroides persicae Chd).—Գեղձենու մեծ լիֆճը կոչվում է «մեծ», վորովհետեւնա, իսկապիս, մյուս լիֆճների հետ համեմատած, շատ ավելի մեծ և: Նա 4—5 մմ մեծություն ունի, մուգ գույնի: Այս լիֆճն ապրում է գեղձենու, ծիրանենու, սալորենու, նշենու բնի և հաստ ճյուղերի վրա, ծծելով նրանց հյութը: Զվերը զնում է նույնպես բների վրա, վորոնք իրենց մեծությամբ և մուգ, համարյա ու գույնով շատ շուտ աչքի յեն ընկնում:

Ամառվա ընթացքում այս լիֆճը տեղափոխվում է ուրիշ, վոչ պաղատու բույսերի վրա, իսկ աշնանը վերադառնում է պտղատու այլիները:

Բրդապտա լիֆճ (Eriosoma lanigerum Hausm).—Բրդապտա լիֆճն

տպլում և խնձորենիների բների և ճուղերի վրա: Խնջը՝ լվիճ կարմրավուն ե, բայց խիստ ծածկված սպիտակ մոժային մազեկներով, և վարչակված ծառերը կարծես սպիտակ բամբակով ծածկված լինեն: Լինածի ծծելուց խնձորենու կեղեր ճաքքում ե, առաջանում են ուռուցքներ, և ծառերը, մասավանդ մատաղ ծառերը, մի քանի տարում վոչընչանում են: Չմեռում ե խնջը՝ լվիճն արմատների վրա կամ բնի ճեղքվածքների մեջ:

Խնձորենու, գեղձենու և սալորենու լվիճները տարածված են Հայաստանի բոլոր պտղաբուծական շրջաններում: Դեղձենու մեծ լվիճը տարածված է գլխավորապես Արարատյան դաշտում: Բրդապատ լվիճը տարածված է Հայաստանի հյուսիսային շրջաններում՝ Ալանվերդու, Իջևանի, Կիրովականի, Դիլիջանի շրջաններում:

Պայքարի միջոցները.

1. Սրսկում անարազին սուլֆատի կամ նիկոտին-սուլֆատի լուծույթով՝ լվիճների դեմ:

2. Աշնանային սրսկում պոլիսուլֆիդով և մասամբ յերկաթարշասպի լուծույթով՝ ձմեռող ձեերի դեմ:

3. Բրդապատ լվիճի դեմ վերջին տարիները մեծ տեղ և տրվում այսպես կոչված «բիոլոգիական» մեթոդին: Ամերիկայից բերված և մի փոքրիկ միջատ՝ ափելինուս անունով, վոր ձու յև ածում բրդապատ լվիճի մարմնի մեջ: Այդ ձվից զուրս յեկող թրթուրը կերակրվում է լվիճի մարմնով: Այսպիսի լվիճները կորցնում են նրանց պատող բուրդը, ուհանում են ու սատկում: Ափելինուսը զարգանում է շատ արագ և մեր պայաններում տարեկան տալիս ե մոտ 10 սերունդ: Հայաստանում ափելինուսն արդեն տարածված է վորոշ վարակված այգիներում և զգալի արդյունք է տվել:

Խնձօրենու ծաղկակեր (*Anthonomus pomorum* L.) — Ամենքը յերեկ ծանոթ կլինեն այն յերեռութիւննետ, վոր գարնանը, յերբ խընծառինիները և տանձենիները ծաղկում են, մեծ քանակությամբ կուկուներ գորշ գույն են ստանում և չեն բացվում: Ցեթե մենք բաց անենք այդպիսի կոկոնը, կտեսնենք մեջը մի փոքրիկ սպիտակ, անոտ թրթուր: Դա ծաղկակեր թրթուրն ե:

Խնձորենու ծաղկակերը 4—5 մմ յերկարությամբ շաղանակագույն, յերկարակների մի բգեղ ե: Չմեռն այդ բգեղն անց և կացնում թափված տերեների տակ, ծառի կեղերի ճեղքվածքների մեջ կամ հողում բնի մոտ: Վաղ գարնան, յերբ բողբոջներն սկսում են ուռչել, բգեղները գուրս են գալիս և կերակրվում են բողբոջներով: Ծաղկելուց առաջ բգեղները ձու յեն զնում կոկոնների մեջ: Մի քանի որից հետո ձվից զուրս և գալիս թրթուրը և կերակրվում է ծաղկի սեռական որ-


դաններով—վարսանդով և առեջքներով, և այդ պատճառով ե, վոր կոկոնն այլիս չի զարգանում: Մեծացած թրթուրը հարսնյակավորվում է հենց կոկոնի մեջ: Հարսնյակից զուրս յեկող բգեղն ամառվա ընթացքում կերակրվում է տերեներով:

Խնձորենու ծաղկակերը տարածված է Հայաստանի բոլոր շրջաններում, բայց գլխավոր նշանակությունն ունի կիրովականի և Դիլիջանի շրջանի շրջաններում, վորտեղ պտղատու ծառերի ծաղկումն ավելի զանգաղ և ընթանում, իսկ այդ դանդաղ ընթացքը նպաստում է ծաղկակերի մասսայական զարգացմանը:

Պայքարի միջոցները.



Նկ. 13. Խնձորենու ծաղկակեր



Նկ. 14. Խնձորենու ծաղկակերից վնասված անձեռներ կոկոններ


1. Վաղ գարնան (մինչև ծաղկելը) ծառերի թափ տալը և թափված բգեղների վոչնչացնելը:

2. Ծառերի բները մեռած կեղեներից մաքրելը և այդ կեղեն այրելը:

3. Ծառերը սրսկելն աղիքային թույներով՝ ծաղիկները թափելուց հետո, յերբ բգեղները դուրս են գալիս կոկոններից և կերակրվում են տերեներով:

Առողենու սինիիս (*Rhynchites auratus* Scop), — Այս վնասա-

տուն մոտ 1 սմ մեծությամբ կանաչավուն-կարմիր գույնի, յերկարա-  
կնձիթ բզեզ կ: Վնասում է ծիրաննուն, բալնուն, կեռասենուն, սալորե-  
նուն: Վաղ գարնանը, յերբ բողբոջներն սկսում են ուռչել, բզեզները գուրս  
են գալիս հողից և սկսում սնվել: Ազգբում կերակրվում են բողբոջ-  
ներով, վորոնք կրծելով՝ փոքրիկ փոսիկներ են առաջ բերում: Այսու-  
հետեւ, յերբ կեռասի պտուղները դառնում են սիսեռի մեծության,  
բզեզը կրծում ե ծիրանի, բալի, կեռասի և սալորի պտուղները  
առաջացնելով խոր փոսիկներ և կորիզի վրա ձու յե ածում: Մի քանի  
որից ձից գուրս և գալիս սպիտակ, անուտ թրթուր, վորը կերակր-  
վում ե կորիզի միջուկով: Յերբ թրթուրը մեծանում ե, գուրս և  
գալիս պտղի միջից և անց-  
նում հողի մեջ, վոր-  
տեղ հարսնյակավորվում ե:  
Նույն աշնանը հարսնյակից  
գուրս և գալիս բզեզ և ձը-  
մեռում ե հողի մեջ: Վնաս-  
ված պտուղները մասումք  
թափում են, մասամբ հաս-  
նում, բայց համառ պտուղ-  
ներն ել վչացած տեսք են  
ստանում շնորհիվ այն  
փոսիկների, վորոնք բզեզն  
և առաջացրել կերակրվելու  
կամ ձու դնելու համար:



Նկ. 15. Վուկեզոծ սինիտա

ծիրանի բերքը:

Պայքարի միջոցները.

1. Ծառերի թափ տալը գարնան ընթացքում մի քանի անգամ:
2. Վնասված թափուկը հավաքելն ու վոչնչացնելը:
3. Փարիզյան կանաչ սրսկելը՝ բողբոջներն ուռչելու ժա-  
մանակ:

Տանձի գլխափողիկ (Rhynchites giganteus Kryn).—Այս բզեզը  
շատ նման է վուկեզոծ սինիտախին, մի քիչ ավելի մուգ գույն ունի:  
Ննասում է խնձորին և տանձին: Սրա կյանքը ևս ընթանում է այս-  
պես, ինչպես վուկեզոծ սինիտախի կյանքը: Գարնանը գուրս յեկող  
բզեզը կերակրվում է բողբոջներով, իսկ յերբ խնձորի և տանձի պը-

ռուղները մի քիչ մեծանում են, բզեզը մեջը ձու յե դնում: Չու զնե-  
ցուց հետո բզեզը կխովկ չափ կտրում ե նույն պտղի պտղակրթը, վո-  
րի հետևանքով պտուղը լրիվ մնունդ չի ստանում, թառաժում ե և  
չորանում: Ձից գուրս յեկող թրթուրը կերակրվում ե սերմերով, իսկ  
հասունանալով՝ դուրս և գալիս պտղից, մանում ե հողի մեջ և այսուեղ  
հարսնեկապորվում:

Ցանձի գլխափողիկը տարածված է գլխավորապես Արարատյան  
դաշտում, պատահում և նույնպես Դիլիջանի, Կիրովականի Հրաննե-  
րում:

Պայքարի միջոցները,

1. Ծառերի թափ տալը:

2. Վնասված թափուկը հավաքելն ու վոչնչացնելը:

